Վանքում ոչինչ ձայն, ոչինչ շշունջ չէր լսւում: Խորին, բարեպաշտական լռութեան մէջ նիրհում էր ամէն ինչ: Լուռ էին զանգակները, որ քարշ էին ընկած կիսակործան աշտարակների գլխից, լուռ էին վարսաւոր ուռենու տերեւները, որ հովանաւորում էին մի քանի մոռացոած շիրիմներ, լուռ էր եւ լուսինը, որ երբեմն յայտնւում էր եւ երբեմն թաքնւում էր սպիտակ ամպերի ետեւում: Ամէն ինչ լուռ էր, որպէս խորին ինքնուրացութիւն, եւ այդ ինքնուրացութեան մէջ ես պէտք է ապրէի, ես պէտք է շնչէի, մի մարդու մօտ, որին «Համր» էին կոչում, որի մէջ եւս ամէն զգացմունքներ, ամէն մտքէր նոյնպէս լռում էին... Արթուն էր միայն չարագուշակ հազը, որ լսւում էր խորտակոած, վշտահար կուրծքից...

— Նա հիւանդ է, — ասացի ես Ասլանին:

— Այո, հիւանդ է, — պատասխանեց նա տխուր ձայնով:

— Ինչո՞վ է հիւանդ:

— Բարակացաւ ունի:

— Որտեղի՞ց է ստացել այդ հիւանդութիւնը:

— Նա երկար տարիներ տանջոել է բանտերում: Յետոյ աքսորոած է եղել մի ցուրտ երկրում...

— Ասում են, որ բարակացաւ ունեցողները շատ չեն ապրում:

Նա իսկոյն չպատասխանեց: Ռոպէական մտածութիւնից յետոյ ասաց.

— Դեռեւս մի յայտնի վտանգ չէ նշմարւում: Ես նրա կուրծքը քննեցի:

— Բայց, աստոած մի արասցէ, եթէ նա...

— Դու այն ժամանակ կը սովորես Արփիարի մօտ: Ես այդ մասին նրա հետ կը խօսեմ:

Արփիարը այնքան սիրելի էր դարձել ինձ, այնքան գրաւոած էի ես այդ ոգելից երիտասարդով, որ վերջին խօսքերը բոլորովին մխիթարեցին ինձ:

Համրի մօտ երկար մնալով, մենք չժամանեցինք վանքի հասարակաց սեղանատանը ընթրիք ուտելու: Մեզ համար դրել էին մեր խուցի սեղանի վրայ մի շիշ գինի, մի մեծ կտոր սառն միս եւ պանիր: Թէ՛ ես եւ թէ՛ Ասլանը մի բան ուտելու ախորժակ չունէինք, բայց ես խմելու սաստիկ ծարաւ էի զգում: Լցրեցի բաժակները Մուշի կարմիր, անուշահոտ գինիով, մէկը դրեցի Ասլանի առջեւը, միւսը՝ իմ առջեւ: Նա վեր առեց իր բաժակը եւ, զարկելով իմին, լուռ տարաւ դէպի շրթունքները:

Մեր խօսակցութիւնը կրկին դարձաւ Համրի վրայ:

— Առաջ նա ինչո՞վ էր պարապում, — հարցրի ես: